

Մհարոն Վարդանյան

## Իրանական ազդեցությունն Աֆղանստանում (1979-1990թթ.)

Աֆղանստանն Իրանի ամենակարևոր հարևաններից մեկն է: Երկու երկրներն ունեն մոտ 936 կմ ընդհանուր սահման, որը նպաստում է պատմական մշակութային, լեզվական, տնտեսական և ազգային (եթնիկ), կրոնական կապերի և ընդհանրությունների զարգացմանը:

1978-1979 թթ. երկու երկրների համար կարևոր ու պատմական նշանակություն ունեցան. 1978թ. ապրիլին Աֆղանստանում հաստավեցին կոմունիստական ուժերը, իսկ 1979թ. փետրվարին Իրանում տեղի ունեցավ Իսլամական Հեղափոխությունը: Այս երկու պատմական իրադարձությունները երկու երկրների համար էլ հանդիսացան անկյունաքարային՝ հիմնովին փոխելով տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը և աշխարհաքաղաքական իրողությունը՝ ինչպես նաև միմյանց հանդեպ հարաբերությունները:

Այաթոլլահ Խոմեյնիի գլխավորած իսլամական հեղափոխության հաղթանակն Իրանում, մեծ ոգևորությամբ ընդունվեց տարածաշրջանի գրեթե ողջ շիայական հանրության, այդ թվում նաև Աֆղանստանի շիա բնակչության կողմից: Վերջիններս սկսեցին մեծ հետաքրքրություն ցուցաբերել դեպի Խոմեյնիի գաղափարախոսությունը, նրա առաջնորդած հեղափոխությունը, որի գաղափարների արտահանմանը մեծապես նպաստում է նաև հենց Իմամ Խոմեյնիի դերն ու նրա առաջարկած փիլիսոփայական հայացքները: Նա գտնում էր, որ. *«երբեք չպետք է կասկածել, որ Իրանի իսլամական հեղափոխությունը տարբերվում է մյուս հեղափոխություններից և՛ էությամբ, և՛ ձևավորվելու պատճառներով, և՛ շարժառիթներով»:*

Իրանը, հենվելով Խոմեյնիի առաջարկած այս գաղափարախոսության վրա և իրեն հայտարարելով ամբողջ աշխարհում շիաների պահապան, կարողացավ արագորեն իր գաղափարները տարածել մոտիկ և հեռու մի շարք երկրներում: Այդ գաղափարներն արագորեն պարարտ հող էին գտնում տարածաշրջանի իսլամադավան երկրներում, քանի որ այնտեղ իշխող վարչակարգերը հիմնականում ճնշման տակ էին պահում տեղի շիա հավատացյալներին

Հեղափոխությունների վերլուծություններով զբաղվող, հայտնի տեսաբան Քրին Բրինթոնը վերլուծելով և համեմատելով Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի և Իրանի հեղափոխությունները գրում է. «*հեղափոխությունները մի օր սկսվում են ու մի օր ավարտվում, յուրաքանչյուր հեղափոխության հաղթանակից հետո սկսվում է խանդավառության ժամանակը, որը նա կոչում է, այսպես ասած, «Հեղափոխության մեղրամսի» ժամակաշրջան: Դա այն ժամանակն է, երբ ձևավորվում է նոր համակարգը: Մակայն այդ մեղրամսը շատ արագ է ավարտվում և գալիս են կամ չափավոր, կամ ծայրահեղական իշխանություններ, իրենց հետ բերելով հակասություններ, ինչն էլ ոչնչացնում է հեղափոխության գաղափարները»:* Այս տեսակետից, հեղափոխությունները հասարակության մեջ թունդ վայրիվերումների արդյունքն են: Այսինքն դրանք աննորմալ երևույթ են և հասարակությունը վերադարձնում են նախկին վիճակին: Շատերի համար այսօր հետաքրքիր է, արդյոք Իրանի իսլամական հեղափոխությունը նույնպես այդպիսին է եղել, և եթե ոչ, որոնք են այն գործոնները, որոնց հիման վրա, ինչպես տեսանք, այս հեղափոխությունը ոչ միայն գոյատևում է մինչ օրս, այլ դրսևորում է նախանձելի հարմարվողականություն, ճկունություն, կենսունակության և տարածվելու զարմանալի միտումներ:

1979-1992թթ. -ի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունն Աֆղանստանում հիմնված էր բացառապես այսթոլլահ Խոմեյնիի գաղափարախոսության և վելայաթ-ե ֆաղիհի հիման վրա, որին նպաստում են նաև վերջինիս խոսքերը, որոնք հնչում են որպես պատգամ. «*Իսլամը քաղաքականության կրոն է, իսլամի միջոցով կարելի է երկիր կառավարել: Այն, լինելով կրոն, իր մեջ է պարունակում նաև քաղաքական մի ողջ գաղափարախոսություն»:* Իհարկե Իրանի արտաքին քաղաքականությունը ներկայումս էլ խարսխված է այս երկու հիմնասյուների, ինչպես նաև իսլամական հեղափոխության արտահանման վրա, սակայն արդի աշխարհաքաղաքական զարգացումներն ու իրակույթներն հաշվի առնելով, փորձ է կատարվում այդ ամենը զուգադրել նաև քաղաքական պրագմատիզմի հետ: Այս ժաանակահատվածը կարևոր ենք բաժանել երկու փոքր փուլերի՝ մինչ այսթոլլահ Խոմեյնիի մահը, քանի որ այդ ընթացքում վելայաթ-ե ֆաղիհն ու հեղափոխության գաղափարները, որոնք հար և նման էին Խոմեյնիի

գաղափարների հետ կյանքի էին կոչվում անմիջապես վերջինիս կողմից ու նախաձեռնությամբ և նրա մահվանից հետո, երբ այդ ամենի կյանքի կոչելը կազմակերպելն ու իրագործելը ստանձնեց ներկայիս հոգևոր առաջնորդ այաթուլլահ Ալի Խամենեին՝ Խոմեյնիի գործի շարունակականությունը խտացնելով «*Այս հեղափոխությունը միանգամայն օգտագործման հեղափոխություն չէ*» մտքում:

Հարկ է նշել, որ ինչպես Խոմեյնին, այնպես էլ Խամենեին իրենց գաղափարներն ու իսլամական հեղափոխությունն Աֆղանստանում տարածելու համար ունեին տեղի շիայական փոքրամասնության՝ հազարների, դոլբաշների և սայյիդների աջակցությունը, որոնք այդ ընթացքում չնչին ներկայություն և ազդեցություն ունեին Աֆղանստանի քաղաքական կյանքում: Այս իրավիճակը փոխվեց, երբ Աֆղանստանում իշխանության եկան կոմունիստները՝ Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության «Խալդ» ֆրակցիայով: Կուսակցությունն այդ ընթացքում 1978 ապրիլ-1979թթ ղեկավարում էր Նուր Մուհամմադ Թարաքին, որին փոխարինեց Հաֆիզուլլահ Ամինը: Այդ ընթացքում աֆղանստանցի որոշ շիայական գործիչներ ողջունեցին և լավատեսորեն ընդունեցին կոմունիստների իշխանության գալը, սակայն շուտով հիասթափվեցին, քանի որ կոմունիստներն, ինչպես ողջ աշխարհում այնպես էլ Աֆղանստանում որդեգրել և առաջնորդվում էին աթեիստական գաղափարներով, և սկսեցին հավատացյալների նկատմամբ կիրառել ձերբակալությունները ու հալածանքներ: Շիա ազդեցիկ հոգևորականներն արագորեն հասկացան, որ նոր ձևավոլող իշխանությունում, կառավարությունում և, ընդհանրապես, քաղաքական համակարգում տեղ զբաղեցնելու համար հարկավոր է այլ կերպ գործել: Ահա այս ընթացքում էր, որ Աֆղանստանում դեռևս հեղափոխության թոհ ու բոհի մեջ գտնվող Իրանին սկսեցին դիտարկել որպես մոդել: Այդ մոդելի դիտարկմանը ոչ միայն օգնում էր այն հանգամանքը, որ այնտեղ տեղի է ունեցել կամ ունենում շիայական հեղափոխության, այլև այն, որ Աֆղանստանի գրեթե բոլոր բարձրաստիճան հոգևորականները՝ մարջա-ե թաղլիդ ունեցող այաթուլաները, կա՛մ իրանցիներ էին, կա՛մ Իրանի կրոնական դպրոցների հետևորդներ և ներկայացուցիչներ: Հետզհետե նրանց դերը գնալով մեծանում էր: Այս ամենն զգալով՝ Հաֆիզուլլահ Ամինին փոխարինած Բաբրակ Բարմելը ունենալով Խորհրդային Միության անվերապահ աջակցությունը, սկսեց դաժան հաշվերահարդարներ տեսնել շիա հոգևորականների

հետ: Միջազգային իրողությունը նույնպես, այսպես ասած, Բ. Քարմելի կողմն էր, քանի որ Իրանն այդ տարիներին զբաղված էր իր ներքին խնդիրներով, ինչպես նաև սկսվել էր Իրան-Իրաքյան պատերզամը, որն Իրանին ստիպել էր կենտրոնանալ սեփական խնդիրների վրա: Սակայն, հարկ է նշել, որ նույնիսկ այդ ծանր օրերում, Իրանը չէր հրաժարվել Աֆղանստանում սեփական ազդեցության տարածումից և հեղափոխությունը դեպի Աֆղանստան արտահանելու մտքից: Դրա մասին են վկայում այդ շրջանի բյուջետային քննարկումները, որոնցում հատուկ տեղ է հատկացվել Աֆղանստանին:

Իրանի դերն Աֆղանստանի հավատացյալ ժողովրդի համար հատկապես կարևորվեց այն ժամանակ, երբ Կոմունիստական վարչակարգի ճնշումներից խուսափելու համար տեղի մուսուլմանները, այդ թվում և սուննիները, սկսեցին զանգվածաբար տեղափոխվել Իրան: Իրանն էլ, բնականաբար, բոլորին ապաստան էր տրամադրում՝ հիմնվելով իսլամական համերաշխության գաղափարի վրա: Սա դարձավ, այսպես ասած, «փախստականների քաղաքականության» հիմքը, որն Իրանն հետագայում սկսեց օգտագործել Աֆղանստանում իր ազդեցության տարածման ու ընդլայնման համար: Աֆղանական ճգնաժամի գագաթնակետին՝ 1991-92թթ. Իրանում կար մոտ 3 մլն աֆղանստանցի փախստական: Այդ փախստականներն Իրանի համար կարևոր էին ոչ միայն որպես իր ազդեցության տարածման գործիքներից մեկը, այլև էժան աշխատուժ, որոնց Իրանն օգտագործեց հետպատերազմյան շրջանում երկիրը վերականգնելու համար:

Այս ամենն, իհարկե, օգնում էին ժամանակակից փուլում Իրանի ազդեցության տարածմանը, սակայ, ինչպես սկզբում նշեցինք, Իրանը հիմնականում հենվում էր շիա բնակչության կողմից ընձեռնված ռեսուրսների վրա: Իր ազդեցությունն այդ բնակիչների ամենատարբեր խավերի վրա տարածելու համար Իրանն օգտագործում էր Իսլամական Հեղափոխության ողջ հեղինակությունն ու ոգևորությունը:

Սկզբնական շրջանում Իրանը գաղափարական, նյութատեխնիկական և քաղաքական աջակցություն էր ցույց տալիս Աֆղանստանի կենտրոնական հատվածի լեռնային շրջաններում ապաստանած, հիմնականում խոմեյնիական գաղափարները կրող և դրանցից ոգեշնչվող շիաներին: Այս գործողությունները դժգոհություն են առաջ բերում Աֆղանստանի շիայական բնակչության մեկ այլ հատվածի մոտ, որոնք

համարվում էին իրանական ծագում ունեցող, Իրաքի Նաջաֆ քաղաքում կրոնական գործունեության ծավալած հայտնի այաթոլլահ, Խոմեյնիի գաղափարական ընդդիմադիր Աբուլ Ղասեմ Խոյիի հետևորդներ, որոնք ինչպես իրենց աաջնորդը բացարձակապես անտարբեր էին քաղաքական իսլամի հանդեպ:

1978-86թթ. ընթացքում Աֆղանստանում շիաները փորձեցին ապահովել իրենց ներգրավվածությունը երկրի կառավարման համակարգում, սակայն հաղիպեցին տեղի կուրմունիստական իշխանությունների կոշտ արձագանքին, ինչն էլ հանգեցրեց վերջիններս կողմից ամենատարբեր գործողությունների սկսմանը: Ըստ տարատեսակ աղբյուրների՝ շիայական խմբավորումների մեծ մասը վայելում էր Իրանի հովանավորչությունը և իրենց համար կառավարման տեսակ էին ընտրել Իսլամական հեղափոխության առաջարկած ձևը, նույնիսկ ստեղծել էին ԻՀՊԿ-ի նմանությամբ գործող Փասդարան-ե Ջիհադ-ե Էսլամի (Իսլամական Ջիհադի պաշտպանության կորպուս) և Սազման-ե Նասր «Հաղթանակ» կազմակերպությունները, որոնք փորձում էին Իսլամական հեղափոխությունն ու գաղափարներն ամբողջությամբ տարածել Աֆղանստանում և այնտեղ էլ կրկնել Իրանում կատարվածը՝ այսինքն Իսլամական հեղափոխությունը: Սակայն, ինչպես վերը տեսանք, Աֆղանստանում այաթոլլահ Խոմեյնին ու վելայաթ-ե ֆաղիհի գաղափարախոսությունն, ի դեմս այաթոլլահ Խոյիի, ունեին լուրջ ընդդիմությունը, որոնք էլ իրենց հերթին էին ստեղծել տարատեսակ կազմակերպություններ, ինչպիսիք են «Շոուրա-յե էթթեֆադ» և «Հարաքաթ-ե Էսլամի» խմբավորումներն ու գործում էին Իրանից և իրանական ազդեցությունից անկախ:

Սակայն, դեպքերի հետագա զարգացումը հանգեցրեց այն բանին, որ շուտով Աֆղանստանում հասկացան. խնդիրները լուծելու համար հարկավոր է ոչ թե պայքարել միմյանց դեմ (խոսքն, իհարկե, Աֆղանստանի շիաների մասին է) այլ՝ համագործակցել: Եվ այդ համագործակցության շնորհիվ՝ 1987-89 թթ. ընթացքում Իրանը հսկայական՝ աջակցություն ցույց տվեց Աֆղանստանի շիաներին՝ հարաբերությունները կարգավորելու և էլ ավելի ամուր դիրքերից հանդես գալու համար:

Իրան-Իրաքյան պատերազմի ավարտից հետո Իրանի հետաքրքրությունն էլ ավելի մեծացավ Աֆղանստանի նկատմամբ և Իրանը կրկին սկսեց ակտիվանալ այդ ուղղությամբ: Իրանի ակտիվությանը, այսպես ասած, նպաստում էր նաև

Աֆղանստանում տիրող իրավիճակը, քանի որ Խորհրդային միության զորքերի դուրս բերումից և Կոմունիստական վարչակարգի փլուզումից հետո, երկրում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ԱՄՆ-ը, Սաուդյան Արաբիան, Պակիստանը, Փեշավարյան Այյանսը կամ Աֆղանստանի մոջահեդների Իսլամական միությունը, որը կազմված էր մոջահեդական յոթ խմբավորումներից («Խալիս» իսլամական կազմակերպությունը՝ **Hezb-e Islami Khalis-Maulawi Khalis, Hezb-e Islami- Gulbuddin Hekmatyar, Jamiat-e-Islami - Salahuddin Rabbani, Tanzim-e Dahwat-e Islami-ye Afghanistan- Abdul Rasul Sayyaf,** Աֆղանստանի իսլամական ազգային ճակատ՝ **Mahaz-e Milli-ye Islami-ye Afghanistan- Ahmed Gailani,** Աֆղանստանի ազգային ազատագրության ճակատ՝ **Jebh-e-Nejat-e Melli- Sibghatullah Mojaddedi,** Իսլամական Հեղափոխության շարժում՝ **Harakat-i-Inqilab-i-Islami-Maulana Mohammad Nabi Mohammad**) փորձեցին համաձայնության գալ և ստեղծել մի կառավարություն, որի կազմում պետք է լինեին բացառապես սուննիներ:

Իրանի Իսլամական Հանրապետությունը, լինելով տարածաշրջանում կարևոր խաղացող, բնականաբար չէր կարող դիտողի դերում լինել, մանավանդ, որ հետսովետական Աֆղանստանում առաջացած իրավիճակում իրենց հետաքրքրություններն ու ներկայությունն ունեին Իրանի տարածաշրջանային հակառակորդ Սաուդյան Արաբիան և հետհեղափոխական Իրանի գաղափարական հակառակորդ՝ Միացյալ Նահանգները: Արդյունքում, երբ 1988թ. -ին Փեշավարյան Այյանսը հայտարարեց իշխանափոխության մասին և ընդգծեց, որ կառավարությունում բացառապես պետք է լինեն սուննիներ, ի պատասխան դրան՝ Իրանը նշեց, որ հազարները (Աֆղանստանի ամենամեծ շիայական խմբավորումը) կոմունիստական վարչակարգի դեմ հաջողությամբ պայքար մղած ուժերից են և հետևաբար պետք է ունենան իրենց ներկայությունը կառավարությունում ու պահանջեց շիաների ներկայության ապահովումը ձևավորվելիք կառավարությունում:

Անշուշտ, Իրանը չբավարարվեց զուտ հայտարարություններով ու պահանջներ ներկայացնելով, այլ 1989թ. -ին ստեղծեց Hezb-e Wahdad (Իսլամական միասնության) կուսակցություն, որի մեջ միավորվեցին Աֆղանստանում գործող և գտնվող բոլոր այն ուժերը, որոնք կրում էին Իսլամական հեղափոխության գաղափարական ազդեցությունը: Կուսակցության ղեկավար դարձավ «Նասրի» հրամանատար Ալի Մազարին: Բացի քաղաքական տարբեր գործողություններից ու ծրագրերին

մասնակցություն ունենալուց, Իրանը, հընթացս աշխատանքներ էր տանում նաև մշակութային դաշտում՝ ակտիվացնելով Աֆղանստանի դարիախոս հատվածին: Շարունակական աշխատանքների արդյունքում՝ ներկայումս, կարելի է ասել, դարին դարձել է Աֆղանստանի հյուսիսային, կենտրոնական և Արևմտյան հատվածների տարբեր էթնիկ խմբերին միավորման կարևորագույն ցուցիչ:

Արդյունքում, Իրանի Իսլամական Հանրապետության վարած հետևողական, գրագետ, հաշվենկատ և ճշգրիտ քաղաքականությունն Աֆղանստանում 1992թ. -ին սովեց իր արդյունքները: Երկար պայքարից հետո, ի վերջո, Hezb-e Wahdad-ը հաստատեց իր ներկայությունն Աֆղանստանի նոր իշխանության կազմում, ինչն, ըստ էության, տվյալ ժամանակաշրջանում Իրանի արտաքին քաղաքականության կարևոր ձեռքբերումներից մեկն էր, քանի որ ապահովեց պրոիրանական ազդեցիկ ուժի ներկայությունն Աֆղանստանի քաղաքական էլիտայում:

Ամփոփելով, կարելի է փաստել, որ սկզբնապես այաթոլլահ Խոմեյնիի գաղափարախոսության ներքո Աֆղաստանում իրանական ազդեցության մեծացումն ու տարածումը հետագայում՝ հեղափոխական ալիքից հետո, իր տեղը զիջեց իրանական պրագմատիկ քաղաքականությանը՝ ապահովելով Իրանի կայուն ներկայությունն իր համար ռազմավարական կարևորություն ներկայացնող երկրում, որը պատմականորեն էլ եղել է իրանական քաղաքակրթության անքակտելի մասը և տեղավորվում է իրանականության ու արմատներով Սասանյանների ժամանակաշրջան հասնող «իրանշահարի» գաղափարի տիրույթում, գաղափար, համաձայն որի Իրանական քաղաքակրթական սահմանները շատ ավելի ընդարձակ ու ընդգրկում են, քան Իրանի քաղաքական սահմանները: